

Արման Ս. Եղիազարյան
Պատմ. գիյր. դոկտոր

ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՔԱՆԵՐԻ ՕՐՈՔ*

Բանալի բառեր – Բագրատունի, Հայոց թագավորություն, իշխանաց իշխան, տերանց տեր, գահաժառանգ, Հայաստան, Վիրք, Աշոտ Ա, Սմբատ Ա, Աբաս, Աշոտ Գ:

Մուտք

Արաբական տիրապետության շրջանում իշխանաց իշխանի պաշտոնը Խալիֆայության կողմից տրվում էր Արմինիա վարչական միավորի գերագույն իշխանին: Բագրատունիների կողմից Հայաստանի քաղաքական անկախության վերականգնման նախօրեին այդպիսիք էին Բագրատա Բագրատունին և Աշոտ Բագրատունին¹: Արաբական տիրապետության փաստացի վերացումից հետո, երբ Արմինիայի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին հռչակվեց Հայոց և Վրաց թագավոր (887–891 թթ.)², իշխանաց իշխանի ինստիտուտը պահպանվեց, բայց ոչ անցյալի ընկալումով և իրավասություններով:

Անդրադառնալով Բագրատունյաց թագավորության արքունի գործակալություններին ու պաշտոններին՝ ուսումնասիրողներն ի մասնավորի քննության են առել իշխանաց իշխանի ինստիտուտը, սակայն բավա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 8.02.2014:

1 Տե՛ս Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 429, 440 և այլն:

2 Ատոլիկը տեղեկացնում է, որ Աշոտը նախքան թագավորելը 30 տարի եղել է Հայոց և Վրաց իշխանաց իշխան: Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի Ատոլիկ**, Պատմություն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրություն, գիրք Բ., Եր., 2011, էջ 740: Պատմիչն այնուհետև հայտնում է, որ Սմբատը թագավորեց՝ «տիրելով բոլոր հայրենեաց իւրոց՝ Հայոց և Վրաց»: Տե՛ս նույն տեղում, էջ 742: Ասել է՝ Սմբատը ժառանգեց մի թագավորություն, որի մեջ մտնում էին Հայքն ու Վիրքը: Պատմիչները տեղեկացնում են նաև, որ Աշոտ Բագրատունին տիրել է ոչ միայն Հայքին ու Վիրքին, այլև Աղվանքին: Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 443–444, **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրություն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 220, Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 85 և այլն:

րարվել են միայն ընդհանուր դիտողություններով՝ չբացահայտելով դրա էությունը: Մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ իշխանաց իշխանը թերևս գերագույնն էր արքունի բոլոր պաշտոնյաներից:

1. Հայոց իշխանաց իշխանը Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո

Բագրատունի առաջին երեք արքաների՝ Աշոտ Ա-ի, Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի օրոք (887-929 թթ.) Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը վարողների վերաբերյալ հույժ կարևոր տեղեկություններ է հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցին: Նա՝ որպես ժամանակակից և իրավիճակին քաջատեղյակ անձնավորություն, անդրադառնալով գահաժառանգման դեպքերին, հարկ է համարում մշտապես ընդգծել, թե ով էր Հայոց իշխանաց իշխանն այդ պահին՝ դրանով իսկ ամրագրելով տվյալ պաշտոնի կարևորությունը Հայոց թագավորության համակարգում:

Խոսելով Աշոտ Ա Բագրատունու մահվան մասին՝ պատմիչը հաղորդում է, որ թաղմանը չէր մասնակցում միայն արքայորդի Սմբատը, «որ իշխան իշխանացն Հայոց էր»³:

Այնուհետև, արդեն Սմբատ Ա թագավորի օրոք (891-913 թթ.) պատմիչը հիշատակում է Հայոց իշխանաց իշխանի տիտղոսը կրող արքայական տան երկու անդամների մասին: Սկզբում իշխանաց իշխանն էր արքայի եղբայր Դավիթը, որը մահացավ երիտասարդ հասակում⁴:

10-րդ դարի սկզբին, երբ պատերազմելուց հետո հաշտվեցին Սմբատ Ա-ն և Ատրպատականի ամիրա Յուսուֆը, նա նվերներ մատուցեց Հայոց արքային, ինչպես նաև նրա ավագ որդի Աշոտին՝ վերջինիս կարգելով «իշխան իշխանացս Հայոց»⁵:

Պատմիչի հաջորդ հաղորդումը վերաբերում է արդեն Աշոտ Բ Երկաթի օրոք (913-929 թթ.) տեղի ունեցած դեպքերին: Ծանր վիճակում հայտնված Հայոց արքան դիմում է վրաց կողմերը՝ մեծ իշխան Գուրգենի տիրույթները: Վերջինս արքայի եղբայր Աբասի աներն էր: Արքան չէր կասկածում այդ երկուսի կողմից նյութված դավադրության մասին: Նկարագրելով այս դեպքերը՝ Հովհաննես Դրասխանակերտցին հավելում է, որ Աբասը «իշխան իշխանաց էր կացուցեալ» Աշոտ Բ-ի կողմից⁶:

Սյուս մատենագիրները Հայոց իշխանաց իշխանի ինստիտուտին հատուկ ուշադրություն չեն դարձրել, ուստի մեր եզրակացությունները ստիպված ենք կառուցել հիմնականում Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումների վրա՝ դրանց հավելելով այլ հեղինակների երկերում պահպանված որոշ տեղեկություններ: Խնդիրն այն է, որ Հովհաննես Դրասխանակերտցին Հայոց այլ իշխանաց իշխանների չի հիշատակում, սակայն որոշ տեղեկություններից դատելով՝ այդ պաշտոնը զբաղեցրել են արքայական ընտանիքի այլ անդամներ ևս:

3 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 446:

4 Տեն նույն տեղում, էջ 478:

5 Նույն տեղում, էջ 480:

6 Տեն նույն տեղում, էջ 544:

Մնբատ Ա-ի կրտսեր եղբայր Շապուհը Վանեվանքի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնադրման արձանագրության մեջ (903 թ.) իրեն կոչում է Հայոց սպարապետ և տերանց տեր⁷: Վերջինս, ինչպես կտեսնենք, ուսումնասիրողներից ոմանք նույնացնում են Հայոց իշխանաց իշխանին⁸:

Դատելով որոշ տեղեկություններից՝ Աբասի թագավորության շրջանում Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը վարում էր նրա որդի Աշոտը (հետագայում՝ Աշոտ Գ Ողորմած թագավոր): Անանիա Մոկացիին նրան հիշատակում է որպես «Աշոտ Հայոց իշխանաց իշխան»⁹:

Ուսումնասիրողները, անդրադառնալով իշխանաց իշխանի պաշտոնին, հայտնել են տարաբնույթ կարծիքներ դրա էության ու գործառույթների վերաբերյալ:

Ըստ **Հ. Գաղբաշյանի**՝ իշխանաց իշխանի տիտղոսը թագավորության վերականգնումից հետո որոշ ժամանակ տրվում էր գահաժառանգին¹⁰:

Խ. Սամվելյանը կարծում է, որ այդ պաշտոնը, որը նա նույնացնում է «տերանց տեր» պաշտոնին¹¹, վարում էին արքայական ընտանիքի անդամները, հիմնականում՝ թագաժառանգները¹²:

Հ. Հարությունյանն այն տեսակետն է հայտնում, որ իշխանաց իշխանը պատասխանատու էր թագավորի առաջ բոլոր վասալների կատարած գործերի համար: Նրան էին ենթարկվում պետության բոլոր մեծ ու փոքր պաշտոնյաները, հարկահավաքները և բերդապահները: Ըստ նրա՝ խնդրո առարկա շրջանում այդ պաշտոնը վարում էին թագավորների եղբայրները¹³:

Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով՝ իշխանաց իշխանը թագավորի ներկայացուցիչն էր ու նրա փոխանորդը: Այդ պաշտոնը հիշեցնում էր Արշակունյաց շրջանի հազարապետությունը: Իշխանաց իշխանը գլխավորում էր հայոց իշխաններին, և նրան էին ենթակա գավառապետ բերդապահ իշխաններն ու քաղաքապետները: Բացի այդ, նա էր ղեկավարում հարկերի հավաքման գործը: Ի վերջո, պատերազմի ժամանակ իշխանաց իշխանը

7 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ IV, կազմեց **Ս. Գ. Բարխուդարյան**, Եր., 1973, էջ 121: Տե՛ս նաև Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, գլ. ԼԷ:

8 Ի դեպ, Ստեփաննոս Օրբելյանի աշխատության թարգմանության մեջ «տերանց տեր»-ը մակարեքված է որպես «իշխանաց իշխան»: Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, թարգմ. Ա. Աբրահամյանի, Եր., 1986, էջ 180-181: Դա կարող է շփոթության մեջ գցել այն հետազոտողներին, ովքեր սկզբնաղբյուրին կծանոթանան թարգմանությամբ:

9 Տե՛ս «Աբարատ», էջմիածին, 1897, մարտ, էջ 140: Ի դեպ, Ռ. Մաթևոսյանը, հիմնավորելու համար Աբասի թագավորության շրջանում նրա որդի Աշոտի՝ Հայոց իշխանաց իշխան լինելու իրողությունը, հղում է հայկական մանր ժամանակագրություններից մեկում պահպանված հետևյալ տեղեկությանը. «Սա (իմա՛ Աշոտ Գ-ն – Ա. Ե.) որ զգոնջացեալսն իշխանաց իշխան անուանէր»: Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Հայոց թագավորության վարչական կարգը X-XI դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1981, N 1, էջ 127: Սակայն նշվածը վերաբերում է Աշոտ Գ-ի կողմից այլ իշխաններին իշխանաց իշխան կարգելու իրողությանը և ոչ թե՛ նրա՝ նախքան թագավորելը Հայոց իշխանաց իշխան լինելուն:

10 Տե՛ս **H. Daghbaschean**, Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893, S. 86.

11 Տե՛ս **Խ. Սամվելյան**, Հին հայ իրավունքի պատմություն, հ. I, Եր., 1939, էջ 281:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 231:

13 Տե՛ս **Հ. Հարությունյան**, Հայաստանը IX-XI դարերում, Եր., 1959, էջ 201-202:

սպարապետի հետ միասին ղեկավարում էր Հայոց գործը¹⁴:

Կ. Յուզբաշյանը նույնպես փորձում է նույնացնել «տերանց տեր» և «իշխանաց իշխան» պաշտոնները՝ հենվելով այն բանի վրա, որ Աշոտ Ա-ի որդի Շապուհը մի դեպքում կոչվում է տերանց տեր, իսկ մեկ այլ դեպքում ըստ հետազոտողի՝ իշխանաց իշխան: Նրա կարծիքով՝ թագավորության շրջանում իշխանաց իշխանի տիտղոսը կորցրել էր նախկին բովանդակությունը, քանի որ անցյալում այն հանդես էր գալիս որպես միջնորդ Խալիֆայության և հայ ազնվականների միջև, մինչդեռ այժմ այդ դերը բաժին էր ընկել Հայոց թագավորին: Ուստի հեղինակը ենթադրում է, որ իշխանաց իշխանի գործառնությունների մեջ էին մտնում թագավորության ներքին քաղաքականությունը և կենտրոնական իշխանության ու առանձին իշխանների միջև հարաբերությունների հարթումը: Ուսումնասիրողը թեականորեն հնարավոր է համարում այն, որ իշխանաց իշխան անվանումը թագավորության շրջանում կիրառվում էր տիտղոսային նշանակությամբ: Հավանորեն տեղի էր ունեցել իշխանաց իշխանի պաշտոնական բովանդակության կորուստ, բայց նաև դրա վերածնություն՝ օժտվելով այլ գործառնություններով: Ի վերջո, Կ. Յուզբաշյանը հանգում է այն մտքին, որ իշխանաց իշխան անվանումն ունեցել է թե՛ պաշտոնական և թե՛ տիտղոսային կիրառություն¹⁵:

Ռ. Մաթևոսյանը սխալ է համարում Կ. Յուզբաշյանի այն տեսակետը, թե իշխանաց իշխան եզրույթը վերածվել էր տիտղոսի¹⁶: Նա նշում է, որ իշխանաց իշխանի պաշտոնը տարբեր շրջաններում վարել են Սմբատ Ա-ն, Աշոտ Բ-ն, Աբասը և Աշոտ Գ-ն¹⁷: Ըստ հետազոտողի՝ ընդհանուր առմամբ հավանական է Ա. Տեր-Ղևոնդյանի և Հ. Հարությունյանի տեսակետը, սակայն կասկածելի է, որ իշխանաց իշխանը զբաղվեր հարկահավաքներով ու բերդապահներով¹⁸: Ռ. Մաթևոսյանը կատարում է ևս մեկ հույժ կարևոր դիտարկում: Իշխանաց իշխանի պաշտոնը, որ գոյություն ուներ նաև Հայոց թագավորության այլ երկրամասերում, իր գործառնությունով էապես տարբերվում էր արքունի համանուն պաշտոնից: Օրինակ՝ Վասպուրականում իշխանաց իշխանը տեղական թագավորի պաշտոնյան էր և օժտված էր սպարապետի գործառնություններով: Եվ ի վերջո, Ռ. Մաթևոսյանը մերժում է Խ. Սամվելյանի և Կ. Յուզբաշյանի այն կարծիքը, թե Աշոտ Ա-ի որդի Շապուհը ևս վարել է Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը՝ միմյանցից տարբերակելով այդ և տերանց տերի պաշտոնները¹⁹:

Եթե փորձենք **ի մի բերել** նշված տեսակետները, կարող ենք նկատել, որ Հայոց իշխանաց իշխանին վերագրվել են գործառնություններ, որոնք վե-

14 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976, էջ 270-271:

15 Տե՛ս **Կ. Յուզբաշյան**, «Բագրատունյաց շրջանի» Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, «ՊԲՀ», 1975, N 1, էջ 34-37:

16 Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., 1990, էջ 104:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 102, **նույնի**՝ Հայոց թագավորության վարչական կարգը X-XI դարերում, էջ 121:

18 Տե՛ս **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 107:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 105:

րաբերում են ամենատարբեր բնագավառների՝ սկսած ռազմականից և վերջացրած հարկահավաքությամբ: Ընդհանուր առմամբ, ավելի ընդունելի է Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքը, որի օգտին են խոսում սկզբնաղբյուրների հաղորդումները: Բացի այդ, պետք է պահպանել տարբերակումը Հայոց իշխանաց իշխանի և տեղական իշխանաց իշխանների միջև, ինչպես դա անում է Հովհաննես Դրասխանակերտցին:

Մյուս կողմից, չնայած Հ. Հարությունյանի կարծիքին, թե իբր՝ իշխանաց իշխանի պաշտոնը վարում էին թագավորների եղբայրները, վերը տեսանք, որ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ երկու դեպքում այդ պաշտոնը վարել են թագավորների ավագ որդիներն ու ևս երկու դեպքում՝ թագավորների եղբայրները: Սակայն այդ չորս դեպքերից երեքում նշված պաշտոնը վարել են ապագա թագավորները, որոնք հիմնականում թագավորի ավագ որդիներն էին:

Հետաքրքրական է նաև Կ. Յուզբաշյանի տեսակետն այն մասին, որ իշխանաց իշխան անվանումը ձեռք էր բերել տիտղոսային բովանդակություն: Սակայն խնդրո առարկայի վերաբերյալ մեր հիմնական սկզբնաղբյուրի՝ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները փաստում են, որ ճիշտ է Ռ. Մաթևոսյանի տեսակետը, թե Հայոց իշխանաց իշխանը արքունի պաշտոն էր, որում նշանակվում էին արքայական տան անդամները:

2. Սմբատ Ա-ի եղբայրների՝ Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը վարելու խնդիրը

Մանրակրկիտ քննության կարիք ունի Սմբատ Ա-ի եղբայրներ Շապուհի և Դավթի կողմից Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը զբաղեցնելու խնդիրը: Դրա պարզաբանումը կնպաստի Բագրատունի առաջին արքաների օրոք Հայոց իշխանաց իշխանների ցանկի ամբողջացմանը և Բագրատունիների թագավորության պատմության մի շարք հարցերի պարզաբանմանը:

Ինչպես տեսանք՝ 903 թ. արձանագրության մեջ Աշոտ Ա-ի որդի և Սմբատ Ա-ի եղբայր Շապուհն իրեն կոչում է Հայոց սպարապետ և տերանց տեր: Ի դեպ, Շապուհին, որը Սմբատ Ա-ի կրտսեր եղբայրն էր²⁰, Հովհաննես Դրասխանակերտցին միայն որպես Հայոց սպարապետ է ներկայացնում²¹: Սակայն փաստն այն է, որ եկեղեցու հիմնադրման արձանագրության մեջ Շապուհն իրեն «տերանց տեր» է կոչում: Ի դեպ, Թովմա Արծրունին, որ երիցս հիշատակում է Շապուհին, նրան սոսկ որպես «որդի թագաւորին Աշոտի»²² և «եղբայր թագաւորին (իմա՛ Սմբատի-Ա. Ե.)»²³ է կոչում: Առաջին դեպքում Շապուհն ուղարկվել էր Աշոտ Ա-ի կողմից՝ սպանված Դերենիկ Արծրունու որդի Աշոտին կարգելու Վասպուրականի իշխան, իսկ երկրորդ անգամ Սմբատ Ա-ի կողմից՝ Վասպուրականի իշխան նշանակելու Գագիկ Ապունրվան Արծրունուն, որը բանտարկել էր Դերենիկի երեք որդիներ-

20 Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 469:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 477:

22 Թովմա Արծրունի և Անանուն, էջ 237:

23 Նույն տեղում, էջ 243:

րին²⁴: Այս իրողությունները ստիպել են Ռ. Մաթևոսյանին «տերանց տեր»-ի գործառույթների մեջ ներառելու Բագրատունի և մյուս գահերեց իշխանների փոխհարաբերությունները: Զարգացնելով իր միտքը՝ հետազոտողը նշում է, որ «տերանց տեր»-ն այն պաշտոնյան էր, որի պարտականություններն էին Վասպուրականի և Սյունիքի «տերեր»-ի փոխհարաբերությունների կարգավորումը Հայոց թագավորի հետ²⁵: Սակայն «տերանց տեր»-ի մասին սկզբնաղբյուրների խիստ սուղ տեղեկությունների պայմաններում այս տեսակետը զուտ թեական բնույթ ունի, ինչն այլ ուսումնասիրողների ստիպել է կասկածի տակ առնելու նման պաշտոնի գոյությունը՝ գործառույթների համանմանության պատճառով այն նույնացնելով «իշխանաց իշխան»-ին²⁶: Ի դեպ, Ռ. Մաթևոսյանի տեսակետը «տերանց տեր»-ի գործառույթների մասին հիշեցնում է Ա. Տեր-Ղևոնդյանի ու Հ. Հարությունյանի կողմից իշխանաց իշխանին վերագրվող պարտականությունները, որոնց համաձայն է Ռ. Մաթևոսյանը: Ուստի հավանական է, որ այդ «իշխանաց իշխան»-ն ու «տերանց տեր»-ը իրականում միևնույն պաշտոնները լինեին: Ավելին, ավատատիրական հասարակարգի տեսանկյունից իշխանը և տերը միևնույն նշանակությունն ունեին²⁷:

Վերոհիշյալ նույնացումը, սակայն, ծնում է որոշ անհարթություն: Վերևում տեսանք, որ Շապուհը Աշոտ Ա-ի կրտսեր որդին էր, ու եթե Դերենիկ Արծրունու մահվան ժամանակ (886 թ.) նա էր «իշխանաց իշխան»-ը կամ «տերանց տեր»-ը, ապա դա հակասում է Հովհաննես Դրասխանակերտցու այն հաղորդմանը, որ Աշոտ Ա-ի թագավորության վերջին շրջանում իշխանաց իշխանը գահաժառանգ Սմբատն էր: Եթե փորձենք խնդիրը լուծել՝ փաստարկելով, թե Շապուհն այդ ժամանակ ոչ թե իշխանաց իշխան էր, այլ միայն հոր պատվիրակը, ապա հաջորդ իրավիճակում, արդեն Սմբատի թագավորության շրջանում, երբ Հովհաննես Դրասխանակերտցին Շապուհին հիշատակում է որպես Հայոց սպարապետ և խոսում նրա մահվանից հետո որդուն՝ Աշոտին սպարապետ կարգելու մասին, բայց այնուհետև ներկայացնում է Սմբատ Ա-ի մյուս եղբայր Դավթի մահը, նրան հիշատակելով որպես Հայոց իշխանաց իշխան²⁸, ամեն ինչ կարծես ընկնում է իր տեղը: Արքան իր մի եղբորը նշանակել է սպարապետ, իսկ մյուսին՝ իշխանաց իշխան: Այն, որ Շապուհի մահից հետո այդ պաշտոնն անցավ ոչ թե Սմբատ Ա-ի մյուս եղբորը, այլ Շապուհի որդուն, ցույց է տալիս, որ սպարապետի պաշտոնը ձեռք էր բերել որոշակի ժառանգականություն

24 Տե՛ս նույն տեղում, էջ 242:

25 Տե՛ս Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 103:

26 Տե՛ս Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 281, Կ. Յուզբաշյան, նշվ. աշխ., էջ 34-36: Վերջինս իր տեսակետը հիմնավորելու համար մեջ է բերում Հայաստանի, Վիրքի և Աղվանքի վրա իշխանություն ստացած Սահլ Սմբատյանի հաջորդ Հովհաննեսի վերաբերյալ Մովսես Դասխուրյանցու այն տեղեկությունը, որտեղ Հայաստանի, Վիրքի և Աղվանքի վրա Սահլի ունեցած իշխանությունը ժառանգած Հովհաննեսը հիշատակվում է որպես «տերանց տեր»: Տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Եր., 1963, էջ 330-331:

27 Տե՛ս Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 91:

28 Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 477-478:

և ավագության սկզբունքով չէր զբաղեցվում: Իսկ իշխանաց իշխանն այլևս Սմբատ Ա-ի մյուս եղբայր Դավիթն էր:

Եթե ընդունենք, որ Շապուհը եղել է թե՛ Հայոց իշխանաց իշխան և թե՛ սպարապետ, ապա ակնհայտ է, որ այդ երկու պաշտոնները չէին կարող նրանից փոխանցվել որդուն, քանի որ Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը կարող էր հավակնություններ ծնել Հայոց գահի նկատմամբ: Բայց քանի որ արքայորդի գահաժառանգը, ինչպես կտեսնենք, պատանդ էր պահվում Ատրպատականի ամիրայի մոտ, այդ հույժ կարևոր պաշտոնը հանձնվել էր Սմբատ Ա-ի քիչ հավակնություններ ունեցող եղբորը՝ Դավթին, որին պատմիչը ներկայացնում է որպես «այր համեստ և հարթ հաւասարութեամբ ի բոլոր գործառնութիւն բարեաց»²⁹: Թովմա Արծրունու անանուն շարունակողը մի կարևոր տեղեկություն է պահպանել այն մասին, որ Գագիկ Ապուրվան Արծրունու սպանությունից հետո Վասպուրականի իշխան Աշոտի մոտ Սմբատ Ա-ն ուղարկեց իր եղբայր Դավթին՝ համոզելու երիտասարդ իշխանին՝ չմեկուսանալ Հայոց թագավորից և Գագիկ Ապուրվանի՝ Վասպուրականի իշխան նշանակելու համար ոխ չպահել³⁰:

Գագիկ Ապուրվանը սպանվել է Ամիդի ամիրայության դեմ Սմբատ Ա-ի 897 թ. արշավանքից անմիջապես հետո, որն անհաջողության էր մատնվել Արծրունյաց իշխանի դավաճանության պատճառով³¹: Փաստորեն, այն, ինչ նախկինում հանձնարարվում էր Շապուհին, այժմ արդեն իրականացնում էր Դավիթը: Տարիներ անց Հովհաննես Դրասխանակերտցին Դավթին որպես Հայոց իշխանաց իշխան է հիշատակում: Մխաված չենք լինի, եթե եզրակացնենք, որ Դավիթը Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը ստանձնել է եղբորից հետո, ամենայն հավանականությամբ, երբ վերջինս նշանակվել է Հայոց սպարապետ: Այդ իրադարձությունը կարող էր տեղի ունենալ մոտ 897 թ.:

Հաջորդ հարցը վերաբերում է Սմբատ Ա-ի մյուս եղբորը՝ Սահակին, որը արքունի որևէ պաշտոն չէր զբաղեցնում: 900 թ. վերաբերող մի հիշատակության մեջ Սահակի կինը հանդես է գալիս որպես այրի³²: Ուստի արքունի գլխավոր Հայոց իշխանաց իշխանի և սպարապետի պաշտոնները պետք է բաժին հասնեին արքայի մյուս եղբայրներին:

Սակայն բաց է մնում 903 թ. արձանագրության մեջ Շապուհի՝ տերանց տեր կոչվելու հարցը: Եթե տերանց տերը նույն ինքը իշխանաց իշխանն է, ուրեմն առնվազն 903 թ. դրությամբ Շապուհը Հայոց իշխանաց իշխան էր: Այդ պարագայում ստացվում է, որ Դավիթը Հայոց իշխանաց իշխան է եղել շատ կարճ ընթացքում՝ Շապուհի մահից «յետ սակաւ ժամանակի»³³ կնքելով մահկանացուն: Մնում է միայն եզրակացնել, որ իրեն տերանց տեր կոչելով՝ Շապուհը հետին թվով արձանագրել է նախկինում իր զբաղեցրած դիրքը: Մյուս կողմից, որպես տերանց տեր հանդես գալու հիմք կարող էր ծառայել արքայական տան անդամ լինելու իրողությունը³⁴:

29 Նույն տեղում, էջ 478:

30 Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 272:

31 Տե՛ս նույն տեղում, էջ 243-245: Տե՛ս նաև՝ Հովհաննես Դրասխանակերտցի, 464-467:

32 Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 472:

33 Նույն տեղում, էջ 478:

34 Տե՛ս Կ. Յուզբաշյան, նշվ. աշխ., էջ 34:

Ի վերջո, Սմբատ Ա-ի եղբայր Դավիթ՝ Հայոց իշխանաց իշխան լինելու փաստի արձանագրումը Հովհաննես Դրասխանակերտցու կողմից խտուրն ապացույցն է այն բանի, որ այդ պաշտոնը կարող էր զբաղեցնել նաև արքայի մյուս եղբայրը՝ Շապուհը: Սակայն անհավանական է թվում, որ Դավիթը Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը ստանար Շապուհի մահից հետո, երբ արքայորդի Աշոտն արդեն ազատության մեջ էր, իսկ դրանից կարճ ժամանակ անց՝ արդեն Դավիթի մահից հետո, Յուսուֆի կողմից կարգվեց Հայոց իշխանաց իշխան: Ամենայն հավանականությամբ, Դավիթն այդ պաշտոնը ստացել էր տարիներ առաջ:

Ամփոփելով արդեն կատարված քննության արդյունքները՝ արձանագրենք, որ Աշոտ Ա-ի օրոք Հայոց իշխանաց իշխան է եղել ապագա թագավոր Սմբատը, վերջինիս գահակալության շրջանում՝ մինչև մոտ 897 թ.՝ նրա կրտսեր եղբայր Շապուհը, իսկ այնուհետև՝ մյուս եղբայր Դավիթը:

Փաստորեն, Կ. Յուզբաշյանը չի սխալվում, երբ գրում է, որ Աշոտ Ա-ի որդի Շապուհը ևս եղել է Հայոց իշխանաց իշխան: Ուստի հարկ ենք համարում Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը վարած վերոհիշյալ հինգ անձանց ցուցակում ավելացնել նաև Շապուհ Բագրատունուն: Ցուցակը կստանա հետևյալ տեսքը.

- Սմբատ արքայորդի՝ Աշոտ Ա-ի օրոք,**
- Շապուհ արքաեղբայր՝ Սմբատ Ա-ի օրոք,**
- Դավիթ արքաեղբայր՝ Սմբատ Ա-ի օրոք,**
- Աշոտ արքայորդի՝ Սմբատ Ա-ի օրոք,**
- Աբաս արքաեղբայր՝ Աշոտ Բ-ի օրոք,**
- Աշոտ արքայորդի՝ Աբասի օրոք:**

Այնհայտ է, որ ներկայացված ցուցակում միայն Սմբատ Ա-ի օրոք է, որ Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը զբաղեցրել են երեք անձ՝ արքայի երկու եղբայրներն ու որդին: Սկզբում Հայոց իշխանաց իշխանը արքայի եղբայր Շապուհն էր: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ նրանից հետո Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը վարել է մյուս եղբայրը՝ Դավիթը: Վերջինիս մահից հետո (մոտ 903 թ.) Ատրպատականի Յուսուֆ ամիրան պատերազմում է Սմբատ Ա-ի դեմ, սակայն շուտով որոշում հաշտություն կնքել: Երկու տիրակալները հաշտվում են, որից հետո Յուսուֆն արքայական պատիվներ է մատուցում Սմբատ Ա-ին, իսկ նրա երեք որդի Աշոտին կարգում Հայոց իշխանաց իշխան³⁵:

Այն, որ ցուցակում ներկայացված Հայոց իշխանաց իշխանները մեծավ մասամբ հետագայում թագավորել են, փաստում է, որ այդ պաշտոնը վարել են արքայական տան այն ներկայացուցիչները, որոնց ժառանգաբար վիճակված էր թագավորել: Բացառություն են միայն Շապուհն ու Դավիթը:

35 Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 478-480:

3. Գահաժառանգ Աշոտի՝ մինչև 903 թ. Հայոց իշխանաց իշխան չնշանակվելու պատճառները

Արդ, մանրակրկիտ քննության առնենք Սմբատ Ա-ի կողմից արքայազն-գահաժառանգ Աշոտի փոխարեն իր երկու եղբայրներին հայոց իշխանաց իշխան կարգելու պատճառները: Խնդիրն այն է, որ Հայոց թագավորության աստիճանակարգում առաջինը պետք է լիներ թագավորի ավագ որդին, այս պարագայում՝ Աշոտը: Դա ապացուցվում է նրանով, որ չնայած Աշոտ Ա-ի մահից հետո նրա եղբայր Աբաս սպարապետի դրսևորած հավակնություններին, գահաժառանգն արքայորդի Սմբատն էր, որը և ի վերջո թագավորեց³⁶: Փաստ է, սակայն, որ Սմբատ Ա-ի ավագ որդի և գահաժառանգ Աշոտը Հայոց իշխանաց իշխան է կարգվել միայն իր երկու հորեղբայրներից հետո և այն էլ՝ Ատրպատականի ամիրա Յուսուֆի կողմից: Դատելով Հայոց իշխանաց իշխանի պաշտոնի էությունից, երբ այն զբաղեցվում էր գահաժառանգների կողմից, կարող ենք համոզված ասել, որ դրա թափուր լինելը, թեկուզ և կարճ ժամանակով, կարող էր վտանգել Բագրատունյաց հարստության ժառանգականությունը, հատկապես այն պայմաններում, երբ Սմբատ Ա-ի կողմից համապատասխանաբար 894 և 899 թթ. Աղվանքում և Կղարջքում թագավորներ էին հռչակվել Համամն ու Ատրնեսեսեհր³⁷: Վերջինս, որ հռչակվել էր որպես «թագավոր Վրաց», շուտով հավակնություններ ցուցաբերեց Սմբատ Ա-ի գահի նկատմամբ³⁸: Այնուհետև Հայոց թագավորությունը մասնատելու նպատակով Յուսուֆը թագավոր օժեց Վասպուրականի Գագիկ Արծրունի իշխանին³⁹: Սմբատ Ա-ն լավ էր հասկանում Յուսուֆի նպատակները, ուստի չէր կարող թափուր թողնել գահաժառանգի իրավունքներ սպահովող Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը: Վերջինիս կարևորությունն ընդգծում է Հովհաննես Դրասխանակերտցին՝ ամեն անգամ հստակորեն նշելով, թե ով էր Հայոց իշխանաց իշխանը:

Ուստի իշխանաց իշխանի պաշտոնը մշտապես պետք է զբաղեցված լիներ: Սմբատ Ա-ի եղբայրների և ոչ թե ավագ որդու կողմից այդ պաշտոնը վարելու խնդրի բացահայտման բանալիներից **առաջինն** այն է, որ Սմբատ Ա-ի ավագ որդի Աշոտը 9-րդ դարի վերջին դեռ չափահաս չէր, ուստի Հայոց իշխանաց իշխան նշանակվել չէր կարող: Դրա օգտին է խոսում Հովհաննես Դրասխանակերտցու այն հաղորդումը, որտեղ Ատրպատականի ամիրա Աֆշինի մոտ պատանդ պահվող Աշոտը հիշատակված է որպես «**գորդեակ** իւր (իմա՛ Սմբատի-Ա. Ե.)»⁴⁰, թեև քիչ անց նրան արդեն որպես «**զԱշոտ որդի արքայի**» է ներկայացնում (ընդգծումները մերն են-Ա.Ե.)⁴¹: Ելնելով վերին ասվածի տրամաբանությունից՝

36 Տե՛ս նույն տեղում, էջ 446-448:

37 Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Հայագիտություն, 135.1, 2011, էջ 16-25:

38 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 485-487:

39 Տե՛ս նույն տեղում, էջ 487-488: Տե՛ս նաև **Ասողիկ**, էջ 744:

40 **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 472:

41 Նույն տեղում, էջ 473:

թերևս ժամանակավորապես, մինչև Աշոտի չափահաս դառնալը, իշխանաց իշխան են նշանակվել արքայի եղբայրները: Շապուհի և Դավթի մահից հետո Աշոտն արդեն չափահաս էր և կարող էր կարգվել Հայոց իշխանաց իշխան:

Երկրորդ եզրակացությունը կարելի է բխեցնել հետևյալ իրողությունից: Ատրպատականի ամիրա Աֆշինի հետ պատերազմներից մեկի ավարտին՝ 897 թ.⁴², Սմբատ Ա-ն ստիպված եղավ իր որդի Աշոտին որպես պատանդ հանձնել ամիրային և կարողացավ նրան հետ ստանալ միայն մոտ 901 թվականին⁴³: Կարելի է բխեցնել, որ պատանդի կարգավիճակում թշնամու ձեռքին գտնվող Աշոտը Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը զբաղեցնել չէր կարող, ուստի այդ պաշտոնին նշանակվել է Սմբատ Ա-ի եղբայր Շապուհը: Սակայն այս դեպքում անհայտ է մնում, թե ինչու՞ արդեն 901 թ. ազատության մեջ հայտնված Աշոտը մինչև 903 թ. չէր նշանակվել իշխանաց իշխան: Հարցի պատասխանը կարող է լինել Հովհաննես Դրասխանակերտցու հետևյալ հիշատակությունը: 899 թվականին Սմբատ Ա-ն թագադրեց Կղարջքի կուրապաղատ Ատրնեսեհին որպես «վրաց թագավոր»⁴⁴: Դրան հաջորդեց Աֆշինի արշավանքը թերևս 900 թվականին⁴⁵: Աֆշինը, որոշ ժամանակ ասպատակելով Հայաստանը և Վիրքը, հեռացավ Ատրպատական: Նա Դավինում թողեց իր որդուն և մեծ ներքինապետին: Դրանից հետո Սմբատ Ա-ն հանդիպեց մեծ ներքինապետին և հաշտվեց նրա հետ⁴⁶: Հավանաբար 901 թ. մեծ ներքինապետը հեռացավ Հայաստանից՝ Սմբատ Ա-ին հանձնելով նրա որդի Աշոտին և մյուս որդի Մուշեղի կնոջը, որոնք պատանդ էին պահվում իր մոտ: Այդ պատճառով 901 թ. Աֆշինը կրկին արշավեց դեպի Հայաստան, սակայն ճանապարհին հանկարծամահ եղավ⁴⁷: Կարելի է եզրակացնել, որ 897 թվականից պատանդի կարգավիճակում գտնվող Աշոտն առանց Ատրպատականի ամիրայի համաձայնության էր վերադարձվել Սմբատ Ա-ին: Ուստի Աֆշինի հաջորդը՝ Յուսուֆը, շարունակեց Աֆշինի սկսած պատերազմը Սմբատ Ա-ի դեմ: Այդ պայմաններում թերևս Սմբատ Ա-ն, թշնամուն ավելի ևս չգրգռելու համար, Հայոց իշխանաց իշխանի պաշտոնում Աշոտին չի նշանակում, քանի որ Աշոտին անկախ իր կամքից ազատ արձակելն էր, որ հատկապես գրգռել էր Աֆշինին ու նաև՝ Յուսուֆին: Այսպիսով, պատահական չէ, որ երբ Սմբատ Ա-ն ու Յուսուֆը հաշտվեցին, դրա պայմաններից մեկը եղավ այն, որ Յուսուֆը ձանաչեց Աշոտին որպես Հայոց իշխանաց իշխան:

42 Աֆշինը Հայոց թագավորություն է ներխուժել Ամիդի ամիրայության դեմ Սմբատ Ա-ի կազմակերպած անհաջող արշավանքից անմիջապես հետո: Տե՛ս նույն տեղում, էջ 466-469: Ամիդի ամիրայության դեմ արշավանքը տեղի է ունեցել 893 թ. դեպքերից չորս տարի անց, այսինքն՝ 897 թ.: Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, էջ 336:

43 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 474-475:

44 Նույն տեղում, էջ 471: Տե՛ս նաև «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը», ծանոթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Լ.Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, էջ 148: Տե՛ս նաև՝ **Ն. Աղոնց**, Երկեր, հ. Ա., Եր., 2006, էջ 501: Տե՛ս նաև՝ **Մ. Զանաշեան**, Դաւիթ կուրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ, 1972, էջ 13-14:

45 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 472:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 473:

47 Տե՛ս նույն տեղում, էջ 474-475:

Այն փաստը, որ Աշոտին Հայոց իշխանաց իշխան է կարգել Յուսուֆը, վկայում է, որ վերջինս ճանաչում էր Բագրատունյաց հարստության ժառանգական իրավունքը Հայոց գահի նկատմամբ: Ի դեպ, Հովհաննես Դրասխանակերտցին միայն այդ պարագայում է, որ նշում է Յուսուֆի կողմից Հայոց իշխանաց իշխանի պաշտոնին գահաժառանգի նշանակման (իմն գահաժառանգի իրավունքների ճանաչման) մասին: Կարելի է եզրակացնել, որ մինչ այդ Ատրպատականի ամիրաները նման իրավունքներ կամ լիազորություններ չեն ունեցել: Սակայն Աշոտի՝ իշխանաց իշխանի պաշտոնին նշանակելը կամ դրան համաձայնություն տալը չի նշանակում, թե Յուսուֆը նման իրավունքներ էր ձեռք բերում, այլ խոսում է այն բանի օգտին, որ նրա հետ պատերազմից հետո հաշտության գնացած Սմբատ Ա-ն նպատակահարմար է համարել ստանալ Յուսուֆի համաձայնությունը, որպեսզի հետագայում նոր գահաժառանգի խնդիր չառաջանա:

4. Հարակից մի քանի հարցեր

Քննության հիմնական մասն ավարտելուց հետո դեռևս անպատասխան են մնում խնդրին առնչվող մի շարք հարցեր:

Հայտնի է, որ 862 թ. խալիֆան Աշոտ Բագրատունուն կարգել է իշխանաց իշխան: Հովհաննես Դրասխանակերտցին, նկարագրելով այդ իրադարձությունը, հաղորդում է, որ խալիֆան «իշխան իշխանացս Հայոց զնա կացուցանէր»⁴⁸: Այսինքն՝ Աշոտի ստացած պաշտոնի անվանումը պատմիչը ներկայացնում է հար և նման Սմբատի, Դավթի, Աշոտի և Աբասի վարած պաշտոնի անվանը: Բայց հայտնի է նաև, որ Աշոտը համարվել է Հայոց և Վրաց իշխանաց իշխան⁴⁹, քանի որ «հաւատացեալ էր վերակացուրիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաձել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ»⁵⁰: Բագրատունիների՝ «Հայոց և Վրաց իշխանաց իշխան», իսկ այնուհետև «Հայոց և Վրաց թագավոր» հանդիսանալու իրողությունն արտացոլված է նաև վրացական⁵¹ և արաբական աղբյուրներում⁵²: Ինչպես հայկական, այնպես էլ վրացական իրականության մեջ ճանաչված է եղել նաև Սմբատ Ա թագավորի «տիեզերակալ» տիտղոսը⁵³: Այնուհետև, երբ Աշոտ Բ-ն, իր գերիշխանությանը ենթարկելով նախկինում Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք Հայոց թագավորության կազմի մեջ մտնող

48 Նույն տեղում, էջ 429:

49 Տե՛ս Ասողիկ, էջ 740: Տե՛ս նաև Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Ն. Մառի անվան կաթինետի աշխատություններ», N 2, Եր., 1947, էջ 109, 111:

50 Թովմա Արծրունի և Անանուն, էջ 220:

51 Տե՛ս Յ. Անչաբաձե, Из истории средневековой Абхазии (VI-XVII вв.), Сухуми, 1959, с. 124-125.

52 Տե՛ս Receueil des textes relatifs à l'émir Sayf al-Daoula le Hamdanide, avec annotations, édité par M. Canard (Bibliotheca Arabica, VIII), Paris, 1934, p. 71.

53 Տե՛ս Պատմութիւն Անանուն Զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի [“История Анонимного Повествователя (Псевдо-Шапух Багратуни)”], Եր., 1971, էջ 159-161: Տե՛ս նաև «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, մաս Ա, «Լրաբեր հաս. գիտ.», Եր., 1989, N 9, էջ 66:

երկրները, հռչակվեց շահնշահ կամ թագավորաց թագավոր [Հայոց և Վրաց]՝⁵⁴ Բագրատունի արքաների շրջանում ամենատարածվածը դարձավ «շահնշահ» տիտղոսը: Շահնշահ էին կոչվում Աշոտ Գ-ն (953-977 թթ.)⁵⁵ ու Սմբատ Բ-ն (977-989 թթ.)⁵⁶: Հայկական ու վրացական աղբյուրներում նույնիսկ 11-րդ դ. սկզբին Գագիկ Ա Բագրատունին (989-1017 թթ.) համարվում էր «շահնշահ Հայոց և Վրաց»⁵⁷ և կամ պարզապես «շահնշահ»⁵⁸:

Ակնհայտ է, որ «իշխանաց իշխան Հայոց և Վրաց»-ից Աշոտ Ա-ի օրոք անցում է կատարվել «թագավոր Հայոց և Վրաց»-ի, իսկ այնուհետև՝ Աշոտ Բ-ի օրոք՝ «շահնշահ Հայոց և Վրաց»-ի: Հայաստանի և հարևան երկրների գերագույն տերն այլևս Հայոց և Վրաց թագավոր/շահնշահն է, սակայն, չնայած դրան, իշխանաց իշխանի ինստիտուտը պահպանվել է: Ուստի ճիշտ է այն ուսումնասիրողների տեսակետը, որ իշխանաց իշխանը Բագրատունյաց թագավորության շրջանում այլևս չունեի նախկին լայն իրավասությունները: Այն զուտ արքունի պաշտոնյա էր, որին գործող թագավոր/շահնշահից հետո ժառանգաբար վիճակված էր գահակալել որպես թագավոր/շահնշահ Հայոց և Վրաց: **Փաստացիորեն՝ դա գահաժառանգման ինստիտուտն էր Հայոց արքունիքում:**

Հովհաննես Դրասխանակերտցուց հետո պատմիչներն արդեն Հայոց իշխանաց իշխանին հատուկ ուշադրություն չեն դարձնում: Արդյունքում՝ գահակալած վերջին Հայոց իշխանաց իշխանը եղել է Աշոտ Գ-ն: Հայտնի է, որ Բագրատունի առաջին արքաներին որպես այդպիսին ճանաչում էր խալիֆան՝ ոստիկանի միջոցով ուղարկելով թագ և թագավորական հանդերձներ⁵⁹: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու վերոբերյալ հաղորդումից՝ խալիֆան հաստատում էր նաև Հայոց իշխանաց իշխանին: Եթե փորձենք Հայոց թագավորի կարգավիճակը և Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը դիտարկել այդ ենթատեքստում, կարող ենք եզրակացնել, որ խալիֆան ճանաչում էր ինչպես գահակալող թագավորին, այնպես էլ

54 Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 551, Ասողիկ, էջ 748, 755, Վարդան վարդապետ, էջ 87:

55 Ասողիկ, էջ 756, Սամուելի քահանայի Անեցոյ Հուսարմուրք ի գրոց պատմագրաց յադագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով Ա. Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1892, էջ 100: Տե՛ս նաև՝ Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէթօնկը), աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 66: Տե՛ս նաև՝ Մատթէոս Ոռոհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 19: Տե՛ս նաև՝ Ա. Տէր-Ղևոնդյան, Մունաջջիւմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շաղղաղայանների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 477:

56 Կիրակոսի Գանձակեցոյ Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 88: Տե՛ս նաև Ա. Տէր-Ղևոնդյան, Հաղբատի հայերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները, «Լրաբեր հաս. գիտ.», Եր., 1979, N 1, էջ 73-80: 57 Անիի Կաթողիկէ եկեղեցու կառուցման արձանագրության մեջ նշված է, որ «Ի :ՆԾ: թ[ու]ի[ն] Հայոց (1001 թ. - Ա. Ե.) ... ի մեծափառ թագաւորութեանն Գագկա Հայոց և Վրաց շահանշահի, ես Կատրանիդէ Հայոց թագուիի ... հրամանաւ առն իմո Գագկա շահանշահի, շինեցի զՍուրբ Կաթողիկէս...»: Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Եր., 1966, էջ 35: Գագիկը որպես Հայոց և Վրաց շահնշահ է հիշատակված նաև Անիի Աբլղարիք Պահլավունու եկեղեցու արձանագրություններից մեկի մեջ: Տե՛ս նույն տեղում, էջ 48:

58 «Քարթլիի մատյան», էջ 74:

59 Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 443, 448, 551 և այլն:

նրա գահաժառանգին: Ճիշտ է, դրանով նա միայն արձագանքում էր արդեն գոյություն ունեցող իրավիճակին⁶⁰, սակայն ուներ այնպիսի մի ազդեցիկ զենք, ինչպիսին Ատրպատականի ամիրայությունն էր, որի ռազմատենչ տիրակալները հաճախ էին արշավում Հայաստան: Ուստի, ինչպես տեսանք, հարկ եղավ, որ Սմբատ Ա-ի որդի Աշոտին Հայոց իշխանաց իշխան կարգի Յուսուֆը: Աշոտ Բ-ի վարած պատերազմները Հայոց թագավորությունն ազատեցին Խալիֆայությունից նույնիսկ ձևական կախվածությունից, սակայն Հայոց և Վրաց շահնշահը, քանի որ ժառանգ չունեին, հարկ համարեց Հայոց իշխանաց իշխան կարգել իր եղբայր Աբասին, որը և հետագայում թագավորեց: Աբաս թագավորը պահպանեց Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը, որը նրա օրոք վարում էր ապագա թագավոր Աշոտ Գ-ն: Վերջինս Հայոց գահին բազմելով 953 թ.⁶¹ հարկ համարեց օծվել 961 թ. մայրաքաղաք հռչակված Անիում:

Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ «լինէր ուրախութիւն մեծ ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ թագաւորութեան աշխարհիս Հայոց՝ ըստ առաջին հարցն»⁶¹: Ասել կուզի՝ Աշոտը թագավոր է օծվել Հայոց նախկին թագավորների կարգով: Կարելի է ներկայացնել բազմաթիվ բացատրություններ, սակայն այստեղ բավարարվենք միայն մեկով: Մեծ ուրախության պատճառ կարող էր լինել այն, որ Աշոտին թագավոր էին օծում հայ հոգևորականներն ու իշխանները, և որևէ տիրակալի թեկուզ և ձևական համաձայնության կարիքն այլևս չկար: Դրա հաստատումն է այն, որ Աշոտ Գ-ն Հայոց իշխանաց իշխանի ինստիտուտի փոխարեն ներմուծեց նոր՝ գահակցության ինստիտուտը: Աշոտ Գ-ի թագավորության վերջին տարիներին նրա որդի և ժառանգ Սմբատը եղել է հոր գահակիցը⁶²: Գահակցության ինստիտուտը կիրառվել է նաև հետագայում, սակայն դրա ներմուծման նպատակը, գործառնությունն ու դրան առնչվող հետագա զարգացումներն արդեն դուրս են սույն քննության շրջանակներից:

Ամփոփենք. Բագրատունյաց արքունիքում գոյություն ունեցած Հայոց իշխանաց իշխանի պաշտոնը Բագրատունի առաջին չորս թագավորների օրոք տրվել է արքայական տան այն անդամներին, որոնց ժառանգաբար անցնելու էր Հայոց գահը: Սմբատ Ա-ի օրոք, ելնելով իրավիճակից, այդ պաշտոնին նշանակվել են նաև Հայոց արքայի երկու եղբայրները: Այդ ժամանակ Սմբատ Ա-ն գահաժառանգ Աշոտին Հայոց իշխանաց իշխան նշանակել չէր կարող, քանի որ վերջինս սկզբում անչափահաս էր, իսկ այնուհետև՝ պատանդ: Սկզբնաղբյուրների տեղեկությունները հնարավորություն են տալիս ձգբրտելու Հայոց իշխանաց իշխանների ցանկը 887–953 թթ. ընթացքում: Նրանց թիվը վեցն է, որոնցից երեքը՝ արքայորդիներ, իսկ մյուս երեքը՝ արքաների եղբայրներ: Նրանցից հետագայում թագավորել են չորսը:

60 Տե՛ս Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 89:

61 Մատթեոս Ուռհայեցի, էջ 3–4:

62 Տե՛ս Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, էջ 146–149:

Արման Ս. Եղիազարյան – պատմական գիտությունների դոկտոր: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայ և Վրաց Բագրատունիների թագավորությունների պատմության, Հայաստանի պատմական աշխարհագրության տարաբնույթ հիմնահարցերը:

Summary

PRINCE OF PRINCES OF ARMENIA IN THE PERIOD OF THE FIRST BAGRATUNI KINGS

Arman S. Yeghiazaryan

After prince of princes of Armenia Ashot Bagratuni was proclaimed king of Armenians and Georgians (887–891), the position of the prince of princes was preserved, but its functions were restricted. For more than 50 years only the members of the royal family with the right to inherit the throne were appointed to the position.

In the reign of the Armenian king Ashot I his son Smbat was appointed to the position of the prince of princes, in the reign of Smbat I – his brothers Shapuh and David and his son Ashot II the Iron (Yerkat), then in the reign of Ashot II his brother Abas and in the reign of Abas – his son Ashot. Afterwards Smbat, Ashot the Iron, Abas and Ashot, son of Abas inherited the Armenian throne. As for Smbat’s brothers, they were appointed as prince of princes because in 897–901 Ashot the Iron, the son and the successor of Smbat I was being held hostage.

Резюме

КНЯЗЬ КНЯЗЕЙ АРМЕНИИ В ПЕРИОД ПЕРВЫХ ЦАРЕЙ БАГРАТУНИ

Арман С. Егиазарян

После того, как князь князей Армении Ашот Багратуни был провозглашен царем армян и грузин (887–891), пост князя князей был сохранен, но его функции были ограничены. В течение более чем 50 лет на этот пост назначались те представители царской семьи, которые являлись наследниками престола.

Во время правления армянского царя Ашота I пост князя князей занимал его сын Смбат, в царствование Смба́та I – его братья Шапух и Давид и его сын Ашот II Ерка́т (Железный), в царствование Ашота II – его брат Абас, во время правления Абаса – его сын Ашот. Смбат, Ашот II, Абас и Ашот сын Абаса впоследствии унаследовали армянский престол. Что же касается братьев Смба́та, то они были назначены на этот пост, поскольку сын и преемник Смба́та – Ашот II в 897–901 гг. был заложником.

2 (ժԲ) քառի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

ՎԷՎ հասկանալիության հասկես